Արձանագրություն N 7

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ

Էդվարդ Հովհաննիսյանի մոտ 2022 թվականի օգոստոսի 5-ին, 12:00-ին կայացած

խորհրդակցության

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝	Առնակ Ավետիսյանի
ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝	Սաթենիկ Թովմասյանի
ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝	Արամ Հովհաննիսյանի
ՀՀ Արմավիրի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների	
Արմավիր համայնքի ղեկավար՝	Դավիթ Խուդաթյանի
Վաղարշապատ համայնքի ղեկավար՝	Դիանա Գասպարյանի
Մեծամոր համայնքի ղեկավար՝	Վահրամ Խաչատրյանի
Խոյ համայնքի ղեկավար՝	Արգիշտի Մեխակյանի
Արաքս համայնքի ղեկավար՝	Ղազար Ղազարյանի
Փարաքար համայնքի ղեկավար՝	Դավիթ Մինասյանի
Բաղրամյան համայնքի ղեկավար՝	Շանթ Առաքելյանի
Ֆերիկ համայնքի ղեկավար՝	Ռուստամ Հասանյանի
ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարների տեղակալների	
ՀՀ Արմավիրի մարզի համայնքների վարչական ղեկավարների	
Լրատվամիջոցների ներկայացուցիչների	

Օրակարգում

1. **ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման գործընթացն ու արդյունքները, առ 01.08.2022թ. դրությամբ, և առաջիկայում վարչարարության իրականացման անհրաժեշտության մասին**

/ՀՀ Արմավիրի
մարզպետ-Էդվարդ Հովհաննիսյան/

2. **ՀՀ Արմավիրի մարզում համայնքային նշանակության խնդիրների (ոռոգման և խմելու ջրի մատակարարում, աղբահանության կազմակերպում, սանիտարական մաքրության ապահովում և այլն) մասին**

/ՀՀ Արմավիրի
մարզպետ-Էդվարդ Հովհաննիսյան/

3. **ՀՀ Արմավիրի մարզում գյուղատնտեսական մթերքների մթերման կազմակերպական աշխատանքների և առկա խնդիրների մասին**

/ՀՀ Արմավիրի
մարզպետ-Էդվարդ Հովհաննիսյան/

4. **Իրավապահ կամ այլ մարմինների ու կազմակերպությունների կողմից ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ու վարչական ղեկավարներից տարատեսակ տեղեկատվության կամ հարցման պատասխան տրամադրելու պահանջի դեպքում մարզպետարան իրազեկելու անհրաժեշտության մասին**

/ՀՀ Արմավիրի
մարզպետ-Էդվարդ Հովհաննիսյան/

Ողջունելով ներկաներին և մինչ օրակարգային հարցերին անդրադառնալը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը տեղեկացրեց , որ կառավարությունը հավանության է արժանացրել մարզի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 41 սուբվենցիոն հայտ: Նա նշեց, որ բոլոր հայտերը հստակեցվել են, մրցութային գործընթացները ընթացքի մեջ են և սուբվենցիոն ծրագրերը ժամանակին և որակյալ իրականացնելու գործում շատ կարևոր է համայնքների կողմից սեփական եկամուտների պատշաճ հավաքագրման ապահովումը:

Օրակարգային առաջին հարցով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը ներկայացրեց համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները գրանցված վերջին յոթ ամսվա կտրվածքով: Նա նշեց,որ 31.07.2022թ -ին ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից ընդամենը եկամուտների պլանավորումը կազմել է 7889896.1 հազ.դրամ՝ 2021թվականին պլանավորված 7531814.0հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 358082.1 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 5449819.8 հազ. դրամ , 2021թվականի հավաքագրված 5250467.8 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 199352.0հազ. դրամով, կատարվել է 69.1%-ով, նախորդ տարվա 69.7%-ի համեմատ:

31.07.2022թ -ին ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների պլանավորումը կազմել է 3234685.4 հազ.դրամ՝ 2021թվականին պլանավորված 2467929.7 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 766755.8 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 1935018.2 հազ. դրամ , 2021թվականի հավաքագրված 1660138.1 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 274880.1հազ. դրամով, կատարվել է 59.8%-ով, նախորդ տարվա 67.3%-ի համեմատ:

31.07.2022թ -ին ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից անշարժ գույքի հարկի պլանավորումը կազմել է 758388.5հազ.դրամ՝ 2021թվականին պլանավորված 720014.3 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 38374.2 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 342418.8 հազ. դրամ , 2021թվականի հավաքագրված 320939.6 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 21479.2հազ. դրամով, կատարվել է 45.2%-ով, նախորդ տարվա 44.6%-ի համեմատ:

31.07.2022թ -ին ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից փոխադրամիջոցների գույքահարկի պլանավորումը կազմել է 1184451.4 հազ.դրամ՝ 2021թվականին պլանավորված 850510.8 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 333940.6 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 786210.1 հազ. դրամ , 2021թվականի հավաքագրված 646299.7 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 139910.4հազ. դրամով, կատարվել է 66.4%-ով, նախորդ տարվա 76.0%-ի համեմատ:

31.05.2022թ -ին ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական տուրքերի գծով պլանավորումը կազմել է 160665.3 հազ.դրամ՝ 2021թվականին պլանավորված 96304.4 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 64360.9 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 123465.7 հազ. դրամ , 2021 թվականի հավաքագրված 90801.0հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 32664.7 հազ. դրամով, կատարվել է 76.8%-ով, նախորդ տարվա 94.3%-ի համեմատ:

31.07.2022թ -ին ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից պետական տուրքերի գծով պլանավորումը կազմել է 52675.0 հազ.դրամ՝ 2021թվականին պլանավորված 39575.0 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 13100.0 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 48067.7 հազ. դրամ , 2021 թվականի հավաքագրված 39515.8հազ.

դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 8551.9 հազ. դրամով, կատարվել է 91.3%-ով, նախորդ տարվա 99.9%-ի համեմատ:

31.07.2022թ -ին ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից հողի և գույքի վարձակալության գծով պլանավորումը կազմել է 132560.4 հազ.դրամ՝ 2021թվականին պլանավորված 129202.7 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 3357.7 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 87063.7 հազ. դրամ , 2021թվականի հավաքագրված 75682.0 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 11381.7հազ. դրամով, կատարվել է 65.7%-ով, նախորդ տարվա 58.6%-ի համեմատ:

31.07.2022թ -ին ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական վճարների գծով պլանավորումը կազմել է 654887.8 հազ.դրամ՝ 2021թվականին պլանավորված 534785.1 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 120102.8 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 394557.8 հազ. դրամ , 2021թվականի հավաքագրված 354080.0 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 40477.8հազ. դրամով, կատարվել է 60.2%-ով, նախորդ տարվա 66.2%-ի համեմատ:

Նա փաստեց, որ առկա ցուցանիշները բավականին մտահոգիչ են, որոշ համայնքներում նույնիսկ շատ վատ, նշելով որ համայնքներում իրականացվող աշխատանքները ուղիղ համեմատական են այս ցուցանիշների հետ և անկախ մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից, պետք համայնքների ղեկավարների կողմից հավուր պատշաճի իրականացվեն իրենց վերապահված լիազորություններն ու պարտականությունները:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը ըստ հարկատեսակների իրականացված հավաքագրումների վերաբերյալ վերը նշված տեղեկատվության համաձայն, գոհացուցիչ չհամարելով գրանցված ցուցանիշները , Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց՝ գործնական միջոցներ կիրառել հավաքագրումների մակարդակը բարելավելու ուղղությամբ՝ հույս հայտնելով, որ նպատակային և համագործակցված աշխատանքի արդյունքում տարեվերջին կբացառվեն կատարողականի ապահովմամբ պայմանավորված խնդիրները:

Օրակարգային երկրորդ հարցով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանն անդրադարձավ ՀՀ Արմավիրի մարզում համայնքային նշանակության խնդիրների՝ ոռոգման և խմելու ջրի մատակարարման, աղբահանության կազմակերպման և սանիտարական մաքրության ապահովմանն ու մի շարք այլ խնդիրներին: Նա տեղեկացրեց, որ այս տարի հնարավորինս կարգավորված է ոռոգման ջրի մատակարարումը գյուղացիական

տնտեսություններին, ինչպես նաև անդրադարձավ համայնքներում աղբահանության խնդրին, նշելով, որ աղբահանությունը և սանիտարական մաքրության ապահովումը շարունակում է համայնքներում մնալ լուրջ խնդիր: Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը անդրադարձավ նաև համայնքային ենթակայության տակ գտնվող բժշկական ամբուլատորիաների ոչ գոհացուցիչ աշխատանքներին, նշելով, որ այս կառույցները աշխատում են ոչ կոմպետենտ կադրերով, առանց սահմանված աշխատանքային ժամային գրաֆիկի և ըստ պահանջի չեն սպասարկում ազգաբնակչությանը:

Առաջարկեց՝

համայնքների և համայնքների վարչական ղեկավարներին միահամուռ աշխատանքի արդյունքում իրականացնեն առավելագույնը՝ խիստ պատասխանատվությամբ լուծելով վերը թվարկված խնդիրները:

Օրակարգային երրորդ հարցով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանն անդրադարձավ ՀՀ Արմավիրի մարզում գյուղատնտեսական մթերքների մթերման կազմակերպման աշխատանքներին և առկա խնդիրներին: Նա մասնավորապես նշեց, որ մթերող կազմակերպությունների կողմից պտուղ-բանջարեղենի մթերման ծավալները նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են, այնուհանդերձ կա խաղողի մթերման խնդիր և այն գտնվում ՀՀ Կառավարությունում քննարկման փուլում՝ հնարավոր լուծման տարբերակներ գտնելու համար: Նա միաժամանակ առաջարկեց համայնքների ղեկավարներին և ոլորտային պատասխանատուներին լինել ուշադիր համայնքներում վերը նշված հարցերին վերաբերող խնդիրների ծագման և դրանց կարգավորման ուղղությամբ:

Օրակարգային չորրորդ հարցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը նշեց, որ իրավապահ կամ այլ մարմինների ու կազմակերպությունների կողմից ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ու վարչական ղեկավարներից տարատեսակ տեղեկատվության կամ հարցման պատասխան տրամադրելու պահանջի դեպքում անհրաժեշտ է նախապես իրազեկել ՀՀ Արմավիրի մարզպետարան: Մարզպետը նշեց, որ նախկինում հարուցված քրեական գործերից արդեն իսկ տեղյակ են և դրանց մասին իրազեկելու անհրաժեշտություն չկա, սակայն նոր գործերի և հարցումների վերաբերյալ, ինչքան էլ որ այդ պահանջը իրականացվում է օրենքի

շրջանակներում և իրավապահ մարմինները տեղեկացնում են, այնուամենայնիվ մի շարք խնդիրներից և բարդություններից խուսափելու համար անհրաժեշտ է նախապես իրազեկել ՀՀ Արմավիրի մարզպետարան:

Ամփոփելով օրակարգային հարցերը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին, տեղակալներին և համայնքների վարչական ղեկավարներին

Առաջարկեց՝

Ամենայն պատասխանատվությամբ մոտենալ համայնքներում առաջացած և ազգաբնակչությանը անհանգստացնող յուրաքանչյուր խնդրին, անել առավելագույնը դրանք կարգավորելու համար՝ կարևորելով համայնքապետարան-վարչական միավոր-բնակիչ կապը առավել սերտ ու արդյունավետ դարձնելու անհրաժեշտությունը, որպեսզի բնակիչն իր խնդրի լուծման հարցում իրեն միայնակ չզգա՝ դիմելով ծայրահեղ քայլերի:

Օրակարգային հարցերի քննարկման ավարտմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

22.08.2022

X

VERIFIED OCSP 22.08.2022 15:56:42 GMT+4

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Արձ.՝Մ.Առուշանյան